«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Դաստիարակ Արմինե Ամիրխանյան `

Մանկապարտեզ՝«Լիլիթ-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ---------- 3
2. ԳԼՈՒԽ 1 ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ
1.1 Նախադպրոցական տարիքի երեխաների բարոյական դաստիարակությունը----------5
3. 1.2 Հայ ազգային տոները և ծեսերը----------7
4. ԳԼՈՒԽ 2 ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
2.1 Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում---------- -9
5. 2.2 «Հայկական Բանակ» տոնին նվիրված դիդակտիկ պարապմունքի մեր Փորձը---------- 10
6. Դիտարկում---------- 14
7. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------15
8. Օգտագործած գրականություն----------16

Ներածություն

Նախադպրոցական մանկավարժությունը գիտություն է նախադպրոցական տարիքի երեխաների կրթադաստիարակչական աշխատանքների օրինաչափությունների, իրականացման մեթոդների և ծրագրերի վերաբերյալ: Ներկայացնելով անձի ձևավորման գործընթացը, պետք է նշենք, որ այն կատարվում է իրար համարժեք երեք գործոնների՝(ժառանգականության, դաստիարակության և սոցիալակն միջավայրի) ազդեցությամբ: Անդրադառնալով դաստիարակության գործոնին, նկատենք, որ այն նպատակադրված գործընթաց է, որն ապահովում է մարդու վարքը տվյալ հասարակության մեջ ընդունված կանոնների համաձայն և նպաստում է անձի անհատական գծերի և որակների ձևավորմանը: Ըստ այդմ մեր հետազոտության շրջանակներում մենք կխոսենք, այդ որակների ձևավորումն ապահովող բարոյական դաստիարակության մասին և դրա իրականացման գործընթացում ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունների մասին:

Հետազոտության նպատակը

Յուրաքանչյուր հետազոտական աշխատանք կատարելու կարևոր պայմանը համարվում է նպատակի պարզումը: Նպատակադրումը միաժամանակ որոշում է հետազոտական աշխատանքի իրականացման ուղղությունները: Այդ առումով մեր կողմից որպես հետազոտական աշխատանքի նպատակ ընտրվել է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը ազգային տոների, ծեսերի, ավանդույթների միջոցով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ազգային տոները, ծեսերը և ավանդույթները իրենց մեջ խտացրած ձևով պարունակում են հազարամյակների փորձով ստուգված բարոյախոսություն, ունեն ժողովրդական իմաստնություն և մանկավարժական մեծ ներուժ:Հետևաբար հմուտ մանկավարժը ներըմբռնմամբ զգում է, թե ինչպիսի մանկավարժական ներգործություն է ունենալու ազգային ավանդույթների և ծեսերի առանձնահատկությունների ներկայացումը երեխայի հոգևոր աշխարհի ձևավորման վրա:

Հետազոտության խնդիրները. Դիտարկել այն արդյունավետ եղանակներն ու մեթոդները, որոնց միջոցով կարելի է երեխաներին հասանելի ձևով ծանոթացնել ազգային ավանդույթներին, տոներին, ծեսերին որպես մշակութային արժեքներ:

Հետազոտության արդիականությունը

Արդիական հետազոտությունները դիտարկում են այն հարցերը, որոնք առավել սուր հնչեղություն ունեն տվյալ ժամանակաշրջանում և ըստ այդմ պահանջում են հրատապ լուծում: Այդ առումով մենք գտնում ենք, որ մեր հիմնախնդիրը արդիական է, քանի որ նրա ուսումնասիրման և վերլուծության կարևորությունը արտահայտվում է նախադպրացականնների կրթադաստիարակչական գործընթացում: Հավելենք, նաև, որ այն հարստացնելու է ապագա սերնդի հոգևոր ուժերը և ազգային արժեքների ձևավորման խթան է հանդիսանալու:

Ակընկալվող վերջնարդյունքները-

1. Զարգացնել երեխաների ստեղծագործական մտածողությունը, երևակայությունը,
2. Նպաստել երեխաների հոգեկան գործընթացների ձևավորմանը,
3. Ապահովել հայեցի և քրիստոնեական դաստիարակությանը:

ԳԼՈՒԽ 1. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

1.1 Նախադպրոցական տարիքի երեխաների բարոյական դաստիարակությունը

Նախադպրոցական մանկավարժությունը գիտություն է նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության գործընթացի իրականացման վերաբերյալ:[1] Դաստիարակության ամենակարևոր նպատակը աճող սերնդին գիտելիքների, կարողությունների, հասարակության մեջ ընդունված կանոնների հաղորդումն է: Նշված ոլորտում կատարված հետազոտությունները վկայում են այն մասին, որ արդյունավետ ձևով կատարվող նախադպրոցական դաստիարակությունը երեխաների հետագա ֆիզիկական և հոգեկան զարգացման համար ունենում է էական նշանակություն: Դաստիարակությունը բազմաբաղադրատարր է, մեր աշխատանքի շրջանակներում մենք կխոսենք միայն բարոյական դաստիարակության մասին

Բարոյական դաստիարակությունը համակարգված պլանավորված ներգործություն է ուղղված երեխաների բարոյական հատկությունների ձևավորմանը, հասարակական բարոյական պահանջներին համապատասխան վարքի կանոնների և նորմերի կատարման ընտելացմանը: Ներկայումս երեխաների դաստիարակության հարցում լուրջ տեղ է տրվում քրիստոնեական դաստիարակությանը, որը նպաստում է երեխաների բարոյական հատկությունների ձևավորմանը: Հիմնվելով այդ գաղափարների վրա կարելի է հաղթահարել երեխաների եսասիրությունը, դաստիարակել սեր մարդկանց, բարու նկատմամբ, ձգտում դեպի ազնիվը:

Նախադպրոցական տարիքի երեխաների բարոյական դասիարակության հիմնական խնդիրներն են բարոյական հատկությունների, դրական սովորությունների ու հմտությունների, բարոյական պատկերացումների և վարքի դրդապատճառների ձևավորումն է: Բարոյական դասիարակության խնդիրներից է նաև երեխաների՝ մարդկանց արարքների գեղեցկությունը տեսնելու ընդունակության զարգացումը: Նշված խնդրի իրականացման համար մեծ նշանակություն ունեն ազգային տոները, ծեսերը:

Բարոյականության կենտրոնում գտնվում է մարդը, նրա բարոյական կերպարը, կապերը, փոխհարաբերությունները այլ մարդկանց հետ: Անձի

[1]Ալեքսանդրյան Է.Ա.Այվազյան Լ.Մ. Խաչատրյան Հ.Վ. և ուրիշներՆախադպրոցական մանկավարժություն, դասագիրք, «Մանկավարժ» հրատ. Երևան-1992թ., էջ271

ձևավորմանը զուգընթաց երեխայի մեջ դաստիարակվում են դրական հատկանիշներ՝ Ճշմարտություն, ազնվություն, համեստություն, կազմակերպվածություն, կարգապահություն և բարոյական զգացմունքներ՝պատասխանատվություն, անձնական արժանապատվություն, մշակվում է վարքի կուլտուրա: Բարոյական պատկերացումներն ու դատողությունները ապահովում են երեխայի կողմից իր արարքի ճիշտ գնահատումը, վարքի ձևի ընտրությունը, վարքի գիտակցումը: Շնորհիվ լավի ու վատի մասին ունեցած պատկերացումների երեխան կարողանում է գնահատել իրադրությունը և ինքնուրույն որոշել ինչպես վարվել:

Երեխաների բարոյական դաստիարակության հիմնահարցը հետաքրքրել է մի շարք հայ գրողների, մտածողների (Խ.Աբովյան, Ղ.Աղայան, Պ.Պռոշյան, Մ.Նալբանդյան, Րաֆֆի և ուրիշներ)Նրանք բարոյական դաստիարակության նպատակը համարում էին հայրենիքին ու ժողովրդին նվիրված մարդ-քաղաքացում դաստիարակումը, որի բնորոշ գծերն են հայրենասիրությունը, ժողովրդասիրությունը, մարդասիրությունը, աշխատասիրությունը, ազնվությունը, համեստությունը:[2]

Նախադպրոցական տարիքի երեխային մատչելի են կարեկցանքի, սրտացավության, ապրումակցման զգացմունքները

Մանկության տարիներին դաստիարակված բարոյական սկզբունքները հետագայում այն աստիճան են ամրապնդվում, որ սկսում են կարգավորել երեխայի վարքը: Այն պահից, երբ երեխան սկսում է հասկանալ վարքի կանոնները, նա ձեռքէ բերում վատ արարքի համար ամաչելու հատկություն: Աստիճանաբար ամոթի զգացումըառավել սերտ է կապվում երեխաների անձնավորության բարոյական հատկությունների հետ և կրում է սոցիալական բնույթ:Մանկական գեղարվեստական գիրքը, արվեստը, ազգային տոն, ծիսակատարությունը վառ կենդանի կերպարներով ներազդում են երեխաների զգացմունքների վրա, ցույց են տալիս լավն ու վատը, բարին ու ազնիվը և ըստ այդմ սեր են առաջացնում բարու և ատելություն չարի նկատմամբ: Արդյունքում երեխաները ընդհանրացումներ անելու, գնահատելու ընդունակություն են ձեռք բերում:

[2]Ալեքսանդրյան Է.Ա.Այվազյան Լ.Մ. Խաչատրյան Հ.Վ. և ուրիշներՆախադպրոցական մանկավարժություն, դասագիրք, «Մանկավարժ» հրատ. Երևան-1992թ., էջ271

1.2 Հայ ազգային տոները և ծեսերը

Պետք է նշենք, որ երեխաների բազմակողմանի զարգացումը ապահովում են տոնական հանդեսները, ազգային տոները, ծեսերը որոնք կազմում են մանկապարտեզում տարվող մանկավարժական աշխատանքների բաղկացուցիչ մասը: Տեղին է ընդգծել, որ դրանք ունենալով որոշակի նպատակաուղղվածություն ներգործուն ազդեցություն են ունենում երեխաների զգայական աշխարհի և գիտակցության զարգացման վրա: Տոնահանդեսների կազմակերպումը նաև ընդլայնում է երեխաների մտահորիզոնը, զարգացնում հիշողությունը, երևակայությունը, խոսքը, որը հանդիսանում է նրանց զարգացման կարևոր գործոն:

Երեխաների աշխարհընկալման, արժեքային համակարգի ձևավորման համար առանձնահատուկ նշանակություն ունեն ազգային տոները, ընտանեկան հանդիսությունները, տաղավար տոներին նվիրված հետաքրքիր միջոցառումները: Նշենք, որ որպես տաղավար տոներ, մեր Հայ Առաքելական եկեղեցում ընդունված են 5 տոները՝ Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության, Սուրբ Հարության(Զատիկ), Պայծառակերպություն (Վարդավառ), Վերափոխումն Սուրբ Աստվածածնի և Խաչվերաացի: Նկատենք նաև, որ որոշ տոներ ունեն միայն հոգևոր բնույթ, իսկ որոշները նաև կատարվում են ժողովրդական ծիսակարգերով և արարողություններով: Այսպես օրինակ «Սուրբ Սարգիս», «Սուրբ Հարություն», «Համբարձում», «Պայծառակերպություն» տոները նշվում են և որպես եկեղեցական տոներ և միաժամանակ ուեն նաև իրենց ժողովրդական նշանակությունը: Հատկապես երեխաների համար տպավորիչ են «Զատիկ» տոնի ընթացքում ձվախաղը, ձուկոտրուկը, «Համբարձում» տոնի ժամանակ իրականացվող վիճակահանությունը, խաղիկները, «Պայծառակերպություն» տոնի ընթացքում կատարվող ջրցան խաղերը:

Խոսելով ազգային նշանակություն ունեցող տոների և ծեսերի մասին, պետք է նշենք, որ վերջինները զարգացնում են երեխաների հայրենասիրական, գեղագիտական զգացումները, ձևավորում ազգային մշակույթի մասին նախնական պատկերացումներ:

ԳԼՈՒԽ 2 ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Ազգային մշակույթի յուրացումը դրված է նախակրթարանի ծրագրի հիմքում, այս դեպքում ազգային ծեսերի իրականացումը դառնում է յուրացման համար հենակետերից մեկը, քանի որ այն արդյունավետ և նոր կազմակերպման ձևերից է: Նախադպրոցական տարիքի երեխաների հոգևոր և բարոյական դաստիարակության արդյունավետ իրականացման գործընթացում կարևոր նշանակություն ունի նրանց ծանոթացումը ազգային տոների, ծեսերի հետ: Ծեսերին և տոներին խաղդրամատիզացիայի եղանակով ծանոթացման ընթացքում երեխայի մոտ հնարավորություն է ստեղծվում զարգացնել խոսքի և քերականական և հնչյունաբանական և իմաստային բաղադրատարրերը: Նախադպրոցական կրթության իրականացման ընթացքում ծեսերի և ազգային տոների ներկայացման նշանակությունը դրսևորվում է նաև նրանում, որ բացի խոսքից զարգանում են նաև երեխայի անձի հուզակամային՝ մտավոր, հուզական, սոցիալական բոլորոլորտները:

Ծեսի կազմակերպման ընթացքում կատարվում են մի շարք գործողություններ, այդ թվում.

- հաղորդակցում
- թեմայի քննարկում
- թեմայի վերաբերյալ սեփական գիտելիքների արտահայտում
- նոր գիտելիքների ձեռք բերում
- լսածի վերածում գործողության:

Խոսելով ծեսերի կազմակերպման մասին, հարկ է անդրադառնալ դրա իրականացման փուլերին: Այն սկսվում է նախապատրաստական փուլով, որի ընթացքում անհրաժեշտ է պատրաստել ծիսական պարագաները: և

Այդ նախապատրաստական աշխատանքները հիմնականում ծիսական պարագաների պատրաստումն է: Ցանկալի է այս գործողությանը ընդգրկել նաև երեխաներին, որոնք հնարավորություն են ունենալու նկարելու, ներկելու, կտրելու և տարբեր նյութերից ծիսական պարագաներ պատրաստել: Այս ամբողջ գործողությունների ընթացքում երեխաները խոսում են ծեսի մասին: Նրանք նույնիսկ

երբեմն իրենց երևակայությամբ հորինում ու ավելացնում են նոր դրվագներ, պատմելով այնինչ իրենց ավելի հոգեհարազատ է: Վերջինը կարևոր նշանակություն է ունենում երեխայի սոցիալական, հուզական և մտավոր զարգացման վրա:

Ծեսն այն միջավայրն է, որտեղ մասնակիցները նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Սանը քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում են ծեսը[3]:

Ինչպես գիտենք խաղը երեխայի խոսքի զարգացման ամենակարևոր միջոցն է: Ծեսերի ամբողջական իրականացումը ինքնին կարելի է համարել խաղ, սակայն մենք ունենք պարզ ու գեղեցկ ծիսական խաղեր, որոնց իրականացման միջոցով կարելի է ունենալ մեծ արդյունք՝երեխայի զարգացման հարցում: Ծեսն այն միջավայրն է, որը երեխային տալիս է հնարավորություն խաղալ ազատ կամ ունենալ դերայինխաղեր:

Ազատ խաղը երեխային տալիսէ ինքնադրսևորվելու հնարավորություն: Ծեսի ընթացքում դերային խաղը օգնում է երեխային յուրացնել ծանոթ ու անծանոթ երևույթները, հասկանալ դրանց դերն ու նշանակությունը, իրենց վրա որոշակի պատասխանատվություն վերցնել, նոր տեղեկություններ ստանալու զարգացնել ունեցած հմտությունները: Ծիսական ու մանկական խաղերը ազդում են երեխայի խոսքին նպաստող մյուս ոլորտների՝ սոցիալական, հուզական, մտավոր զարգացման վրա: Ինչպես նշեցինք ծեսի իրագործումը ինքնին խաղ է[4]:

[3] https://liliazakharyan.wordpress.com/2019/04/

[4] https://tatevsahakyanblog.wordpress.com/2018/06/14/1967/

2.2 «Հայկական Բանակ» տոնին նվիրված դիդակտիկ պարապմունքի մեր փորձը

Ներկայացնենք մեր կողմից իրականացված դիդակտիկ պարապմունքը, ըստ այդմ նշենք, որ այն նվիրված էր Հայկական բանակի տոնին:

Թեմա՝ Հայկական բանակ

Տեսակը՝ Զրույց , հարց ու պատասխան, Կոլաժի պատրաստում

Նպատակը- Երեխաներին հաղորդել գիտելիքներ Հայկական բանակի կազմավորման մասին, դաստիարակել հայրենասիրություն, ներշնչել հպարտության զգացում: Երեխաների մոտ զարգացնել մտածողությունը, խոսքի կառուցումը, հարստացնել բառապաշարը նոր բառերով՝ օր. Մարտունակ, խիզախ, անպարտ, քաջարի, սխրանք, զինվորական տեխնիկա, նորակոչիկ:

Խնդիրները.

1. ձևակերպել հարցադրումներ ուղղված՝ Հայկական բանակի մասին ճանաչողական ունակությունների ձևավորմանը,

2. զրույցը տանել հայրենասիրության դաստիարակության ուղղությամբ,

3. Նկարչությունը կազմակերպել ուղղված երեխաների տեսական գիտելիքների ամրապնդմանը :

Նախապատրաստական աշխատանք –երեխաների հետ նախապես անցկացնել ընթարցանություն Սարմեն «Քաջ զինվոր», Ս.Մուրադյան՝՝ «Սահմանապահ մեծ եղբայրս», Վ.Վարդունի՝ «Ես ֆիդայի եմ», Հ.Հայրապետյան՝«Սասունցի Դավիթ», Լ.Կասիլ՝«Հերոսը», Լ.Կասիլ՝ «Անմահ հերոսը» , Վ.Այգեկցի՝«Իմաստուն զինվորը» ստեղծագործությունների շրջանակներում: Ինչպես նաև իրականացնել զրույցներ ազատամարտիկների, Արցախի հերոսամարտի մասնակիցների հերոսությունների, Հայոց բանակի կազմավորման մասին:

Անհրաժեշտ նյութեր–Նկարներ Հայկական բանակի, ռազմի դաշտի, Ավարայրի ճակատամարտի պատկերներով, ներկայացվել են նաև ազգային հերոսների՝Վազգեն Սարգսյանի, Թաթուլ Կրպեյանի, Մոնթեյի, Անդրանիկ Զորավարի դիմանկարներով:

Վերջնարդյունքներ

1. երեխաները կիմանան հայ ազգային հերոսների մասին

2. երեխաները կհարստացնեն իրենց բառապաշարը
3. երեխաների մոտ կամրապնդվի հայրենիքի նկատմամբ սերը և պատասխանատվությունը:

Ընթացքը-Պարապմունքը սկսվեց երեխաներին ուղղված բանակի մասին հանելուկով.

Որքան մեծ լինի ու որքան հզոր

Այնքան թշնամին կլինի անզոր:

Հաջորդիվ դաստիարակի կողմից երեխաներին հաղորդվում է, հայրենիքի պաշտպանի մասնագիտության պատմությունը, որի մեջ նշվում է, որ բոլոր տղաները մեծանալով ծառայելու են բանակում, սովորելու են կրակել, տանկ, զինվորական մեքենա զինվորական օդանավ վարել: Թեպետ բանակում ծառայելը դժվար է, բայց պատասխանատու և պատվաբեր գործ է: Բանակը կազմված է տարբեր զորքերից՝տանկային, օդային, ծանր հրետանի, ականազերշողներ, սահմանապահներ: Նրանք բոլորն էլ ծառայում են մեր հայրենիքին, պաշտպանում մեր երկրի սահմանները

Դաստիարակը իր պատմության մեջ նաև խոսում է այն մասին, որ Երևանում է գտնվում Ազգային հերոս Վ.Սարգսյանի անունը կրող Ռազմական ակադեմիան, որի սաները դառնում են հայկական հզոր բանակի սպաներ և բարձրաստիճան զինվորականներ: Նրանք խաղաղ պայմաններում ծառայող հայրենասեր տղաներին սովորեցնում են զինվորական գործը՝կրակել, հսկել, պաշտպանել հայրենիքի սահմանները, ականազերծել ճանապարհները, տանկեր և զինվորական այլ տեխնիկա կիրառել, իսկ պատերազմի ժամանակ որպես հրամանատար առաջնորդում են զինվորներին ռազմի դաշտ՝թշնամու դեմ մարտնչելու համար:

Դաստիարակը շարունակելով նյութը կատարեց հարցադրում.

-Երեխաներ գիտե՞ք, որ մենք հայկական բանակին նվիրված տոն ունենք, գիտե՞ք, որ այդ տոնը մենք նշում ենք հունվարի 28-ին: Այդ օրը քաղաքամայր Երևանում տեղի է ունենում զորահանդես, հարապարակ են դուրս գալիս հայկական բանակի զորքերը, զրահամեքենաները, տանկերը, հրթիռները, օդային զինված ուժերը և ողջ հայ ժողովուրդը ցնծության մեջ է:

Զրույցի հաջորդ հատվածում դաստիարակը երեխաներին ուղղեց հարցեր որոնք ունեին հետևյալ ուղղությունները.

Դաստիարակ-Ինչպիսի՞ն է մեր բանակը

Երեխաներ-ուժեղ, հզոր, մարտունակ, անպարտ

Դաստիարակ-Ի՞նչ եք կարծում բանակի տոնը ուրախ տոն է, թե՞, տխուր

Երեխաներ-և ուրախ տոն է և տխուր

Դաստիարակ-այո երեխաներ, ճիշտ եք, այդ օրը մեր ազգը մեծարում է զինվորներին, պատերազմի հերոսներին, տուրք է մատուցում հայրենիքի համար նահատակված զինվորների հիշատակին: Տխուր տոն է, քանի որ, այդ օրը մարդիկ այցելում են եռաբլուր, ծաղիկներ դնում զոհվածների շիրիմներին: Եռաբլուրն այն վայրն է որտեղ թաղված են հայրենիքի համար մարտնչած և զոհված զինվորները:ՈԻրախ տոն է, քանի որ այդ օրը մենք նշում ենք մեր հաղթանակը:

Այնուհեև դաստիարակը սաներին ուղղեց հետևյալ հարցը.

Դաստիարակ-երեխաներ իսկ հիմա ասեք տեսնեմ, թե ի՞նչ գիտեք մեր հայրենակիցների գործած սխրանքների մասին(պատմեք Մոնթե Մելքոնյանի, Թաթուլ Կրպեյանի, Վազգեն Սարգսյանի մասին):

Երեխաներ-մենք գիտենք, որ նրանք իրենց կյանքն են տվել մեր հայրենիքի համար, Արցախի ազատագրման համար:

Դաստիարակ-Այո երեխաներ, ճիշտ եք ասում, ես ուզում եմ նաև ավելացնել, որ Վազգեն Սարգսյանը նաև մեր բանակի կազմավորողն է, Մոնթե Մելքոնյանը նաև ունի այլ անուն Ավո, նա իր անձնական երջանկությունը զոհելով իրեն նվիրել է Արցախի ազատագրմանը:

Պարապմունքի հաջորդ հատվածում երեխաներին բաժանվեցին թղթեր, մատիտներ, սոսինձ, կտորներ, բնական նյութեր, լրագրերից, մանկական ամսագրերից հանված զինվորների, զինվորական կյանքի, զինտեխնիկայի պատկերման նկարներ: Այնուհետև նրանց հանձնարարվեց այդ նյութերով ձևավորել կոլաժ նվիրված Հայկական Բանակի տոնին: Նշված աշխատանքի կատարման ընթացքում հնչում էր ազգային երաժշտություն(§Պատիվ ունեմ¦, «Թռչեի մտքով տուն», «ախպերս ու ես») :

Պարապմունքի լարվածությունը թուլացնելու նպատակով կատարվում է ընդմիջում-դադարներ, որոնց ընթացքում սաները խմբով արտասանում կամ երգում են: Այս դեպքում դադարի ժամանակ նրանք արտասանեցին հետևյալ ստեղծագործությունը.

-Եկեք շարվենք մենք հավսար -Զինվորներ ենք մենք հավասար

-Թող թշնամին վախենա

-Քաջ ենք, ուժեղ, անխնա:

-Մենք քայլում ենք միշտ խրոխտ

-Մեկ-երկու, մեկ-երկու

-Վեր խոյանում արծվի պես

-Դե, հիմա դուք տեսեք մեզ:

Ամփոփելով պետք է նշենք, որ ծիսական երգն ու երաժշտությունը մեծ ազդեցություն է գործում երեխայի զարգացման տարբեր ոլորտների վրա, այդ թվում՝ զգացմունքային, սոցիալական, լեզվական: Մեղեդին հղկում է հիշողությունը, հետևաբար երեխան հիշելով երգի բառերը, կարող է զարգացնել իր լեզվական կարողությունները: Մեր աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ երբ երաժշտությունը ուղեկցում է նրանց կողմից նկարչության, ապլիկացիայի, կոլաժների պատրաստմանը, ապա նրանք ավելի սիրով ու ջերմությամբ են կատարում իրենց հանձնարարված առաջադրանքը: Կապված վերոհիշյալի հետ տեղին է նշել, որ ծիսական երգն ու երաժտությունը զորեղ միջոց է նաև երեխայի սոցիալական զարգացումը խթանելու համար:

Դիտարկում

Դաստիարակը պարապմունքը անցկացրեց ուրախ և անկաշկանդ մթնոլորտում: Թեմային հատուկ լուծումների, հետաքրքրիր, բազմաբովանդակ նկարների միջոցով կարողացավ ընտրված թեման՝ «Հայկական բանակ» հասանելի դարձնել երեխաներին: Որպես պարապմունքի ամփոփում՝ երեխաներին իրենց ձեռք բերած գիտելիքները ամփոփեցին խմբային և ենթախմբերով աշխատանքի միջոցով: Երեխաները բաժանվեցին խմբերի, նրանց տրամադրվեց բոլոր անհրաժեշտ նյութերը և առաջարկվեց, որ միասին ստեղծեն «Հայկական բանակ» պատկերող կոլաժ: Դիդակտիկ, ուսումնական նյութերի կիրառմամբ պարապմունքը հասանելի էր և ձևաչափով և կատարած տարատեսակ աշխատանքներով:

Դիտորդներ – Տնօրեն, մեթոդիստ, դաստիարակ:

Այսպիսով, անցկացնելով պարապմունքը՝ եկանք այն եզրակացության, որ ն/դպ տարիքի յուրաքանչյուր երեխա պարտավոր է իմանալ հայկական բանակի, հայրենիքի պաշտպանի հերոսական արարքների մասին, դաստիարակել հայրենասիրություն, հպարտության զգացում: Խրախուսել հետաքրքրասիրությունը, ստեղծագործական միտքը, կապակցված խոսքը, հարստացնել բառապաշարը՝ «մարտունակ», «անպարտ», «խրոխտ», «սխրանք», «ծառայել», «նորակոչիկ», «զինվորական համազգեստ» բառերով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նյութի ներկայացումը մեզ հնարավորություն տվեց անդրադարձ կատարելու ազգային ծեսերի, տոների կարևոր կրթադաստիարակչական նշանակությանը: Ինչպես նաև ընդգծելու ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում հատկապես նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում: Ընդհանրացնելով մեր կատարած աշխատանքի արդյունքները, պետք է նշենք, որ ազգային տոների, ծեսերի կազմակերպումը կրթական գործընթացում կատարում է մի շարք գործառույթներ, այդ թվում՝ դաստիարակող, ուսուցանող, զարգացնող: Դաստիարակող գործառույթի միջոցով ձևավորվում է նախադպրոցական տարիքի երեխաների արժեքային համակարգը իր բոլոր բաղադրատարրերով: ՈՒսուցանող գործառույթի օգնությամբ երեխաները ստանում են համապատասխան գիտելիքներ ազգային մշակույթի, հոգևոր ծիսակատարություններ վերաբերյալ, սովորում են նոր բառեր, երգեր, պարեր, հանելուկներ: Զարգացնող գործառույթը նրանց մոտ ձևավորում է հաղորդակցման մշակույթ, մտածողության բաղադրատարրերը,, վերլուծելու կարողությունը:

Մեր կողմից իրականացված դիդակտիկ պարպմունքը ցույց տվեց, որ նախադպրոցական տարիքի երեխան ազգային ծեսերի և տոների ներկայացման ընթացքում կարողանում է կիրառել իր գիտելիքները, ազատ արտահայտում է իր միտքը, զարգանում է նրա երևակայությունը:

Օգտագործած գրականություն

1. Ալեքսանդրյան Է.Ա.Այվազյան Լ.Մ. Խաչատրյան Հ.Վ. և ուրիշներՆախադպրոցական մանկավարժություն, դասագիրք, «Մանկավարժ» հրատ. Երևան-1992թ., էջ271
2. https://liliazakharyan.wordpress.com/2019/04/
3. https://tatevsahakyanblog.wordpress.com/2018/06/14/1967/